

ԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12
Տարեկան	6
Վեցամսեայ	15
Վեցամսեայ	8

Ամերիկայի համար	3
Տարեկան	4.50
Վեցամսեայ	1.50

Ծանուցում սոյոք ստա
ջին երեսին համար 40 ս.
իսկ վերջին երեսին հա-
մար 20 սակրիս է. երե
րեկ անցի սեզաններու
համար 20 0/0 զեղջ կըլ
լայ:

Վստնայի համար ձևոք 40 սակրիս

ՇԱՐՇՈՒՄ

ՄԱՐԿԻ ԱՋԳԱՅԻՆ, ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ. ՏՊԵՐԱՌՈՒԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին Կարմիր զրկե
կարգադրութեան հաս-
ցիին.

Редакция на вѣстникѣ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjourn“
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
ձևոք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձևոք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք նս չեն տրուիր

ՇԱՐՇՈՒՄԻ ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԲԱՏԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԱՋԳՈՎԻՆ ՅԵ- ՂԱՓՈՒԱԿԱՆ

Խորունկ Սուգը կ'եղբայրա-
ցնէ սյուսր ամբողջ Հայութիւնը:
Սեւ արծաթի մը պէս ան իր թե-
ւերուն տակ կ'առնէ ողջակիզում-
ներու համար ուխտուած հայուն
զաւակները ու անոնց սիրտերը
կը կրծէ: Սեր ցեղին մէջ այլ-
եւս չը մնայ մաս մը, որ չունե-
նայ իր բռնութեան նահատակ-
ները: Հորիզոններէ հորիզոններ
հայ մայրերը կուլան ու կոյսերը
ցաւէն կը քեղնին. մեր հովիտնե-
րու և գաղտնավայրերու արիւնա-
շաղախ հոյերը վարդերէն ու շու-
շաններէն այրիացած՝ վերքերու
նման այտահատ վրէժի կարմիր
ծաղիկներով պիտի ծածկուին: Ա-
րաքօր աւելի պղտոր պիտի հոսէ
ու Մասիսը սեւ ամպերու քողին
տակ անհունօրէն պիտի տխրի:
Սակայն մեր վանքերու և եկեղե-
ցիներու կոչնակները, որոնց պա-
րանները սակաւին մեր ձեռքէն
չեն խլուած, այս խաղաղութեան
կոչնակները, որոնք գարիւր շա-
րունակ մեզ հրաւիրեցին տա-
նաքանու մայրական ծոցին մէջ
մեր վիշաք լալու և սրբազան սե-
ղաններուն վրայ մեր ստրկի վը-
հատութիւնը դարբնելու, այսօր-
ուրէն անոնք մահազանգեր դար-
ձած փոթորկոտօրէն մեզի մարտա-
հրաւիր պիտի կարգան: Բն խո-
րաններու ծոցերուն մէջ սրբա-
նուէր սեղաններուն վրայ խա-
չելութեան պատկերի առաջ չէ
որ մեր քրիստոնէի ազգայան
«հեզութիւնն» ու անբուժելի պի-
տի շարունակէնք կ'առնէ, այլ Ա-
տեղութեան Բագինին առաջ վը-
րեմն է որ մեր առնական բա-
ղու կներով պիտի կոփենք, ու
«մահ կամ ազատութեան» ուխտն
է, որ պիտի կնքենք անդառ-
ձան զայրոյթէն ծամծամ մեր
լեզուներով: Եւ կնդրու կը չէ, որ
պիտի միայ մեր բուրվառներուն
մէջ, այլ նահատակներու ու
կորները, որպէս զի մեր լայն-
ցած ունգները նուիրական մե-

անընթաց շարունակ հոտուրտան,
ու սրտերն իս անոնց հոգեւարքի
տխրութեամբը լեցուի:
Այսօր այլեւս ազգովին յեղա-
փոխական դարձանք: Եթեթողանն
ու մտաւրը մեզի մեր խաղաղ յար-
կերէն ընդհարումներու լայն պո-
ղոտանները քշեցին:
Վայրկեանը ճգնական է և վը-
սեմ:
Ըմբռնենք այդ ու զօտեպնդ-
ուած ազգովին մարկուինք զէպի
տառ, զէպի բռնութեան բար-
ձունքները, ուրկէ մեր Փառքի
առաւօտին մէջէն մեր հին ու նոր
նահատակներու պայծառացած
չրթունքները մեր շրթունքները
կը փնտրեն:

ՆԵՐԿԱՅ ՔԱՂԱՔԱԿՐՈՒԹԻՒՆԻ Ը

Պատմութիւնը յիշում է եւրո-
պական ներկայ յառաջադէմ,
կուլտուրական (*) ժողովուրդնե-
րի համար մարդկային կեանքի
անհատաւորի, գոյաւորի, կէս-
մարդկային և կէս-գաղանային
վայրերի շրջաններ: Եղել են
մամանակներ, երբ մարդկային
ընդամաթիւ զոհեր կուլ են գնա-
ցել Փարաուններին կամ ներոն-
ներին մոլեկան տենչանքներին,
երբ միտքն ու խիղճը պատած
են եղել քիսի և անհատական
կամայականութիւնների թանձր
մշուշով, երբ արդարագատու-
թիւնն ու ազատ գաղափարը կաշ-
կանդւած են եղել բիրտ, կոպիտ
ոյժի պողպատեայ շղթայով: Ոչ
միայն հին, այլ և միջին դարե-
րում մարդկային կատարեալ ա-
զատութիւն գրեթէ գոյութիւն
(*) Կուլտուրա բառը արմատապէս
նշանակում է լեզուութիւն. սակայն ընդ-
հանրապէս այժմ կուլտուրական են
կոչում այն մարդկանց եւ հասարա-
կութիւններին, որ հենց իրանք են
լեզուակալ. զարգացած կրթւած,
Այդ մտքով գործ է ածում նաեւ
կուլտուրա բառը. մշակում, զարգա-
ցում, յառաջադիմութիւն: Նոյն
մտքով գործածում ենք եւ մենք մեր
յօզւածներում:

չէ ունեցել, այլ, կարելի է ա-
սել. միայն ազատութեան գաղա-
փարը լոկ իրերու մտքի փիլիսո-
փայական ամենաբարձր և վեհ
արտայայտութիւն, վարդապե-
տութիւն՝ քարոզել է այս կամ
այն ծաղրած, լքած անհատից,
նա երբէք չէ ժողովրդականա-
ցել, պէտք եղած նմայն ու
ազգեցուցութիւնը երբէք չէ ունե-
ցել հասարակութիւնների վրայ:
Այդ գաղափարներից առաջնոր-
դւած, զրգւած համայնական
շարժումների, դործերի գուք
չէք հանդիպել և՛ արեւելեան
ամենահին դարերում. լուսաւոր-
ւած երկիրների, և՛ Աթէնքի,
Հռոմի զարգացման «ոսկեդա-
րերում»: Այդ օրերից անցել
գնացել են էլի՛ շատ օրեր, տա-
րիներ, դարեր. այժմ, ասում
են, «մամանակները փոխել
են»։ Այն որ հին է, արիւնտ,
ցաւոտ, անիրաւ՝ յանձնել է
պատմութեան էջերին, մոռացու-
թեան: Այժմ ասում են, բիրտ
ոյժի, անհատական գաղափարի
ըզձաքների փոխարէն թագաւո-
րում են միտքը, խիղճը, ար-
դարութիւնն ու իրաւունքը: Հա-
մայնքը այսօր վարակել է մի
գերագոյն վսեմ իտէալով, որը
սրբազորւած է անյիշատակ ժա-
մանակներից սկսած, դարերի
հոսանքում, մարդկային անձայր
ցաւերով, արցունքով, արիւնով:
Այդ վսեմ իտէալը, այդ վեհ
գաղափարը ազատութիւնն է,
մարդկային կեանքի, մտքի զար-
գացման համար ապահով պայ-
մաններ, պատիւ, աշխատանքի
և ստացուածքի սեփականութեան
անձեռնմխելի, ազատ միջա-
վայր:

նութեան հարստութիւններից
հրապուրելու համար: Արար-
աշխարհի այս լայնածաւալ գր-
կում միթէ՞ կարելի է մարդ ա-
րարածին ենթարկել զրկանքնե-
րի, տանջանքի, բռնաբարութի.
դրա դէմ կը բողոքէ, բարձրա-
ձայն կը գոռայ համակ քաղա-
քակիրթ մարդկութիւնը: Թէ
մարդը այժմ յանձնւած է համայ-
նական այնքան զթոռ հոգածու-
թեան՝ կուլտուրական ժողովրդ-
ների հասարակական կեանքը
տալիս է փաստեր: Մի փոքր շա-
փով անիրաււ գերմանացի
բանտերի, նրա ճակատի քրտին-
քի արդարութեան մի մասի յա-
փշտակման համար ալէկոծում
է այսօր ընդհանուր Գերմանիոյ
բնակչութեան կէսը, էգոնց կը
փոթորկի ամբողջ Գերմանիան:
Տեսնում է՞ք, ո՞ւ, ասում են,
մարդկութեան, ազատութեան,
գաղափարի համար է...
Ինչքան հրապուրիչ է սա, վա-
ղորդեան քաղցր, զով ու կենսա-
տու օգի ազգեցութեան պէս հո-
վացնում, զովացնում է մարդկա-
յին հոգին: Մարդիկ էլ երջանիկ
են լինում, ազատ են շնչելու
ընդարձակ բնութեան մայրական
ծոցում. իրենց նախորդների
արեան, կեանքերի զոհարբու-
թեան սքանչելի պտուղը այժմ
են քաղելու, խաղաղ, բարգա-
ւած կենցաղ են վարելու, ազատ
են ապրելու: Այժմ, ասում են,
այսպէս է կեանքը բաղաւոր...
Կայ սակայն մի երկիր — և
դեռ քանիսնե՞ր նրա նման —
մի անագին, լայն հորիզոնների
տալածութիւն, ուր կեանքը
երբէք չէ համապատասխանում
ներկայ քաղաքակրթւած, «մար-
դասէր» դարի խոստումներին:
ուր նա կատարեալ տառապանք է
և որտեղ ապրող ժողովրդի սիր-
տըն ու հոգին, ցաւոտ ու վի-
րաւոր, անպատում վշտից մո-
մուռ են քամում: Եւ այդ երկի-
րը այժմ էլ, ներկայ քաղաքա-
կրթւած, ազատութեան դարում
էլ, ներկայացնում է թշուառ-
ութեան ու արեան ծով, որի մի-

Մ. Յ.

այն մի կոհակը սրանից դեռ վեց եօթ տարիներ առաջ խեղդեց իր ճապարհի մէջ 300 հազար անմեղ մարդկանց մի հօտ : Հազարաւոր տարիներէ ի վեր, դեռ Բագրատունիների անկումից ըսկած, այդ երկիրը ենթարկւած է հզել արեան ու նախճիրի, մերթ արիւնածարաւ Արարացիներից ու Թաթարներից : Մերթ մոլեկրօն ու նենգ Պարսից ու Յոյնից, մերթ վայրենի Սելջուկներէն ու վերջապէս լինում է մօտ վեց հարիւր տարի՝ ինչ տնքում է Օսմանեան թրքերի վայրագութիւնների տակ :

Ինչ տարբերութիւն ունի այստեղ ներկան անցեալից :— Այն, որ այժմ բռնարարումն ու աւերը, թալանն ու սպանութիւնները աւերում են հրէշագործ մտքի կատարելագործած մեքենաներով, քաղաքակրթութեան անկասկած թեմամբ : Տառապանքի երկիրը ազգի փոխել է կատարելագործութիւն, մասսային կատարածների հանդիսատեսն վայրերի, վերջապէս հայրութեան նախկին որբանը այժմ նմանում է մի ահաբեկի փոսի, որին սրտի կատարելան անգործութեամբ կարող է քկոչել ընդհանուր զերեզման : Մարդակեր գազաններ էլ կան, բայց նրանք երբ գոհացնում են իրանց քաղցը՝ էլ չեն պատասուս, իսկ մարդկանց կզակը յագուրդ չի ստանում : Ապանում են, հասպանում ու քրքլալով, իրենց արիւնաթաթախ հիմնները վերվեր քաղաքակրթութեան երեսին են ցցում մի բուպէ, ցոյց տալիս...

Մարդկային զոհերի անվերջ շղթայի օղակների շարունակութիւնն են կուում այսօր, աւելի տենդոտ, աւելի քինայոյզ, իսկ հանդիսատես քաղաքակրթութեան երեսին են ցցում մի բուպէ, ցոյց տալիս...

քի : խղճի թագաւորութեան անուրջներով... Այդ ոչինչ, այդպէս է նշում նաեւ երկրից, այդ մեծ սպանգանոցից, գեհնեցի պոկւած եօտար երկրներում խարսխած հայ գաղթականութիւնը, որի սիրտը բթացած, կոպտացած է գիտակից անտարբերութեամբ, ոճրագործ անշարժութեամբ :

Ըմիլ Շարշանց
5 հոկտ. 1903

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԷԲԸ
(Լեօնօրհեկեկ)

(Շար. Ասխուրդ Բիւլեն և վերջ)

Ֆէհմի գրքից կարգալէ ետքը, բնականօրէն մարդ կը տրամադրուի ինքնիրեն հարցնել թէ ինչո՞ւ, երբ սեղափոխութիւնը այնքան հեշտին է, դեռ չի կատարուի— Ի՞նչ կըսեմ— նոյն իսկ չի փորձուիր : Հեղինակը այս հարցումը կանխատեսած է, ու առաջուրէն կը պատասխանէ :

Որովհետեւ հետեւանքները զարհուրելի են : «Համոզուած հայրենասէրներ, որոնք երկար առեւել ի վեր իրենց կեանքը կը զոհաբերեն», չեն պակսիր : Բայց ի՞նչ բանի պատճառաւ Սուլթանին եւ իր պալատականներուն զլխատումը յառաջ պիտի բերէ ճշմարիտ «նախճիր» մը եւ ազգային ազէտ մը : «Որովհետեւ արդի ոչժիւնն շնորհիւ ապրող պաշտօնեաները իրստ բազմութիւն ու հրգոր են : Արքայապան մը չի կըրնար ազգուօրէն մեր դատին օգուտ բերել : «Օրինակելի պատիժ մը պէտք է, որ սակայն տրուի ազգին հաւանութեամբ կամ ընդհանուր ազգային ապստամբութեամբ մը ու ոչ թէ զինուորական խմբակի մը կողմէ :

Իսկ ազգը յայտնապէս դեռ անպատրաստ է, Բայց Ֆէհմի կընդունի որ Սերպիլի Արքայապետը թագաւորին եւ Տրակա թագուհոյն սպանումը իր կուսակցութեան համար աւելի մեծ ծառայութիւն մատուցած է, քան թէ տասը տարուան գործն բերօքականտա մը եւ հազարաւոր յեղափոխականներու անձնագոհութիւնը :

նը : Ընդհակառակը, ըստ Ֆէհմի, մակեղոնական յուզումները կուշացնեն օսմանեան ազատագրութիւնը : Անալ, հայկական շարժման պէս, անշատական ու կրօնական նկարագիր մը ունի, որ կը հարկադրէ թուրք յեղափոխականները վտանգուած Թուրքիոյ կողմը յարելու : Եթէ ամէնքս ալ, առանց կրօնի ու ցեղի խտրութեան, իրարու ձեռք կարկառէինք Երլուրդի այս նոր պսութիւյլը քանդելու համար, այն ատեն պիտի հի' էինք ազատ եւ ազատական Թուրքիա մը, որ հաստատուած ըլլար կարգի ու օրէնքի եւ մարդկային իրաւունքներու յարգանքի վրայ :

Կարգ մը Երիտասարդ Թուրքեր, որոնց հանգիստը եւ Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ, ինձի իրենց եղանակով հասկոցեցած են թէ ինչո՞ւ իրենց դիրքին պնդած «յեղափոխութիւն» մը օգտուելով մեր գործերուն կը միջամտէ եւ շարժումը իրեն ինպատ կը շահագործէ : Այն ատեն միայն կը գործենք, երբ այս միջամտութեան հանգիստը զօրաւոր ու ապահով նեցուկ մը գտնենք :

Ահա առիկ պայման մը որ Սուլթանին դեռ ընդերկար խաղաղ օրեր կը խոստանայ : Իսկ Երիտասարդ Թուրքերուն սկարտիստը պիտի կըրնար ուրիշ ապահովութիւն մը տալ երկչոտ Սուլթանին, իթէ ազգէն իր նկարագրի իրեն սպաննացող վտանգներու մասին զէպի չափազանցութիւն չի հակէր :

Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնը իրայցնէ ալ շատ զարհուրեցնող չի թուի :

— Պատճառը այն է որ, կըսեն Երիտասարդները կուսակցութիւնը էնքզինքը չի ցուցներ : Յեղափոխականները չըլլապատուած, լրտեսուած ու հսկողութեան տակ կը ծածկուին ու իրարմէ կը կասկածին նոյնիսկ : Գրգռիչ գործակալներ, վերալրտեսներ առիթի մը կը սպասեն : Վայնոր որ ականջին ծայրը կը ցուցնէ Ապա թէ ոչ իրապէս Երիտասարդ Թուրքերուն թիւը անգիրն է : Ամէն պաշտօնէութեան մէջ անոնցմէ կայ, մինչեւ իսկ կայսերական գահին սանդուխներուն վրայ : Այսինչ խոշոր

պաշտօնեան որ Սուլթանին համակրանքը կը վայելէ, մեզի հետ է եւ վաղն ալ մեզի հետ պիտի մնայ :

Այս բուռններուն մէջ ճշմարտութեան մաս մը կայ : Երիտասարդ Թուրքեր գոյութիւն ունին հոն՝ որ երբեք չսպասուիր, եւ առհասարակ կարելի է ընդունիլ որ շատ կը հաւանութիւն ու շարժարանքի կենթարկուին, եթէ երեւան գան, Բայց եւ այնպէս, տարակուսելի է որ այնքան բազմութիւն ըլլան, նոյն իսկ իրենցմէ մասնց խոստովանութեամբ, եւ ուժով կուսակցութիւն մը կազմեն, ինչպէս շեն վարանի ըսել գրեթէ իրենց բոլոր մարդիկը :

Այս ալ հասկնալի է : Իրենց պետերը վտարանդի են, ու Պրիւսիէն, Բարիզէն, Լոնտոնէն դժուարաւ կը նան ամուլ յուզում մը յառաջ բերել, իրենց կուսակցներէն անոնք որ ձերբակալուած էին, բանտարկուեցան կամ աքսորուեցան, իսկ գաղտնի միտցածները հարկադրուած են հազար նախազգուշութիւններ ձեռք տանել : Հաւաքումները նոյնիսկ մասնակի անկարելի են, խոսակցութիւնները անցորդի մը քմահաճոյքին ենթակայ, թղթակցութիւններ պահելը շատ անխուսդուրդ է : Եւ հարկ չի կայ ըսել որ մամուլը գոյութիւն չունի :

Որպէսզի յեղափոխական կուսակցութիւնը մը գորգանայ, պէտք է գէթ որ ազատութեան օկզբնաւորութիւն մը նշուէ : Թուրքիոյ մէջ ընդառաջական կուսակցութիւն մը կարելի է : Միայն թէ համիտական գրութեան խոստովանութեան ու միանգամայն ստած առաւելութեանը չընդհանրուէ զաւարտութիւններն ալ ոչ այնքան ինքնայօծար եւ ոչ ալ յարատեւ են :

Վերջապէս, Երիտասարդ Թուրքերը նոյն իսկ կամուրջի տկարութեան սաղմ մը կը պահեն իրենց մէջ : Թուրք են ու Թուրք կը մնան, և իրենց արեւմտեան պճնումներուն տակ թրքական շրթերը կը պահեն : Եւ թողաւ ուսում առած են, ֆառիկ յարկեր յաճախած, քաղաքակրթութեան սնդորով մը կը փայլին, սակայն մարդկային գաղափարներ ծանօթ են իրենց, Բ զիրիվիզմը մասնաւորապէս անոնց վրայ մեծ ազդեցութիւն ըրած է, ոչ անոր համար որ ատ վարդապետութիւնը գիտական ու իրապաշտ տարրեր կը պարուենակի, ալ ընդհակառակը իր իտէլիստ ու

ՓՃԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ
(10)
ՆՈՒՆԻՐ Ս. Չ.— ԻՆ
ԳԼՈՒՆ Գ.

Մեծ յոյսեր խոստացող ձեռք անցաւ, եւրոպական քննիչ յանձնաժողովը իր գործը վերջացրեց : Ապացուցելով որ Սասունի կոտորածը տեղի է ունեցել թուրք կառավարութեան հրամանով, եւ սկսեց ճնշում բանեցնել Սուլթանի վրայ : Սուլթանը Շաքիր փաշային արտակարգ պաշտօնով ուղարկեց հայկական նահանգները բարեկարգելու եւ հայերի քրդերի զէմ պաշտպանելու նամար, իբր թէ : Հայ յեղափոխականների լուրջ մասը չը հարատայ Շաքիր փաշայի բարի նպատակով զրկվելուն, ու ճիգեր թափեց Հայաստանը զէնք հասցնել : Չէնքի պէտքը աւելի անհրաժեշտ դարձաւ, սակայն զէնքի

գրամը չը կար : հայ հարուստը փոքր էր կտրել, նա չէր կարողանում բաժան վել դրամից, եւ միշտ անհիմն պատճառաբանութիւններով էր ուզում արդարացնել իր քարասրտութիւնը : Անտարբեր էր եւ կովկասի հայ երիտասարդութեան ամենամեծ մասը : Երբեմն ինտելիգենտ եւ յեղափոխութեան վարիչի յաւակնութիւններ ունեցող երիտասարդութիւնը արդէն յոգնած, դեռ ոչ մի լուրջ գործ չը կատարած, միայն մի քանիներու սակայն բանտերի մէջ նստելով յետ էր քաշվել եւ անձնատուր եղեր իր դիրքը շտկելուն, իր սպադան նիւթակէս ապահովելու գործին : Կովկասում իրական մեռելութիւն էր տիրում այնքամանակ, երբ աւելի կենդանի, գործուն եւ ետուն պէտք էր լինել Այդ միջոցներում եթէ անհասանել չը լինէին յեղափոխական գործը կովկասում բոլորովին պէտք է մեռնէր : Շուտուհեւ, քոս Պետրոսը իրենց մի քանի ընկերներով, հազիւ էին կտրողանում վառ պահել յեղափոխութեան կայծը, որ որ միայն երբեմն-երբեմն պլպլում էր գաւառական այս ու այն քաղաքներում եւ հազիւ մի քանի հրացան գնելու համար դրամ էին ձարում : Յեղափոխական գործը ոչնչանալու մօտ էր թէ երկրում, թէ երկրից դուրս : Գործը թուլացնում էր եւ երկու յեղափոխական մարմինների գոյութիւնը, որոնցից մէկը իր ուժերը վերջնապէս վատնելու շարժմէջ էր, իսկ միւսը դեռ այնքան չէր ամրապնդվել, որ կարողանար մի մեծ վճռողական քայլ առնել, կազմակերպութիւններից մէկը գառն իրականութիւնը տեսնելով շէր հաստում մօտակայ յաջողութեան, միւսը իրականութիւնը մի կողմ թողած, իր թոյլ ուժերին մեծ կարեւորութիւն տալով, կարծում էր թէ մի քայլ եւս, եւ անհ Հայաստանը ազատ է լինելու :

Եւ այդ ինքնավստահ ու դիւրաբով, հազիւ էին կտրողանում վառ պահել յեղափոխութեան կայծը, որ որ միայն երբեմն-երբեմն պլպլում էր գաւառական այս ու այն քաղաքներում եւ հազիւ մի քանի հրացան գնելու համար դրամ էին ձարում : Յեղափոխական գործը ոչնչանալու մօտ էր թէ երկրում, թէ երկրից դուրս : Գործը թուլացնում էր եւ երկու յեղափոխական մարմինների գոյութիւնը, որոնցից մէկը իր ուժերը վերջնապէս վատնելու շարժմէջ էր, իսկ միւսը դեռ այնքան չէր ամրապնդվել, որ կարողանար մի մեծ վճռողական քայլ առնել, կազմակերպութիւններից մէկը գառն իրականութիւնը տեսնելով շէր հաստում մօտակայ յաջողութեան, միւսը իրականութիւնը մի կողմ թողած, իր թոյլ ուժերին մեծ կարեւորութիւն տալով, կարծում էր թէ մի քայլ եւս, եւ անհ Հայաստանը ազատ է լինելու :

հաւատ կազմակերպութիւնը ստեղծեց մայրեան Պոլսոյ Բարսի-Ալիի անգլէն ցոյցը : Հայերը փոխանակ զէնքով սասպարէշ գալու եկեղեցիները լցվեցին, իրենց բողոքը թուրք կառավարութեան յայտնելու համար : Նոյն միջոցներում տեղի ունեցաւ Տրուսի գոյնում Բահրի փաշայի վրս սպանութեան փորձը, միւս կազմակերպութեան կողմից : Եւ սկսվեցին հայկական սարսափներ-կոտորածները : Պոլսոյ ցոյցը եւ Բահրի փաշայի զէմ եղած սպանութեան փորձը մի տեսակ նախապատճառներ դարձան Սուլթանի համար իրազորելու այն ծրագիրը, որը 90 թւականի սկիզբներին նա փայտալում էր եւ յարմար ծաւանակի սպասում : Սուլթանին, իր ծրագրերը իրազորելու մէջ, ամենամեծ զօրավիզը հանդիսացաւ Ռուս սպիտակ ցարը, որ մի ձեռքով Ֆրանսայի եւ Անգլիայի հետ ստորագրուած էր բարենորոգումների մայրեան ծրագրերը, միւս ձեռքով Սուլ-

կրօնական ձգտումներով: Իրենց հոգին ոչ մէկ ճշգրտութիւն չէ ստացած, բայց Յառաջագործութիւն, Մարդկութիւն, Արդարութիւն բառերը միշտ բերններուն մէջ կը լողան: Բիշ մը հրատապ խնդիրներու մէջ մղեցէք զիրենք, իսկոյն թուրք երեւան պիտի գայ և մինչև իսկ Հին թուրքը, Ես լսած եմ երիտասարդ թուրքեր, որոնք կը ցափին որ սաճիկ կտավարութիւնը չափազանց ներողամիտ եղած է Մակեդոնիոյ Պուլկարներուն հանդէպ, Եւ Պ. Ժ. Կոլիս չէ՞ որ, երկու տարի առաջ, Ռիվի Պիոն ին մէջ մեզի կուտար երիտասարդ թուրքի մը տրիպար պատասխանը Հայուն մը ուղղութիւն, երբ այս վերջինը անոր կը հարցնէր թէ արդեօք այդ «յեղափոխութենէն» վերջը թուրքերոյ բոլոր ժողովուրդները, իսլամ ու քրիստոնեայ, հասարակ իրաւունքներ պիտի վայելին:

— Ի՞նչ ք, կըսէր ան, հաւասարութիւն կուզէք մեր վրայ իշխելու համար: Այսու հանդերձ, երիտասարդները միշտ կը պնդեն թէ իսլամական մտնականութիւն բռնածը առասպել մըն է և մէկ մարդու գործած ոճիրները այդ բանին կը վերագրուի, այնպէս որ, երբ մէկմի կը գրէր սիրուն կերպով մը Վեր ծրագիրներուն չի խառնենք ո՛չ քահանան, ո՛չ մօլան, մէկը իր եկեղեցիին ու միւսը իր մզկիթին մէջ թողուք: Իրեն պիտի հարցնէի Հայուն պէս. «Տեսականին մէջ շատ աղէկ, բայց գործնականին մէջ»:

Երբ Սուլթանը անհանգիստ կըլլայ իր անձին դէմ արձակուած աւելի բռն քան լուրջ «յեղափոխական» սպառնալիքներէն, ապահովապէս, մինքն չենք զարմանար: Բայց նոյն Սուլթանը երբեմն դոնուսկոլութեամբ խորհելու է թէ իսլամը շատ հասարակ է, քանի որ իր կայսրութեան ամենէն ազատական մասը եղող երիտասարդ-թուրքերու կուսակցութիւնը իսլամ Պետութեան ամենէն համոզուած նեղուկներէն մէկըն է:

Մտնի Բան

ՎՏԱՆԳՅՈՒՈՐ ՍԿԶՐՈՒՆԲ

Կիմանամ, որ անցեալ օրու ան ժողովին մէջ, որ անգլոյս ազգ. գործոց կարգ. Պատ. Մասնախումբը մասնաւորապէս գումարած է նորընտիր Հոգաբարձութեան հետ խորհրդակցելու համար Ազգ. երկսեռ վարժարաններուն հետ վիճակին վրայ, հոգաբարձութեան Տիար ատենակալը ծանրակրօն յայտարարութիւններ ըրած է:

Ոնգրին էութիւնը պարզիչ առաջ կը մղուի յայտնելու որ հայ վարժարաններու ու հայ մանկուոցն կը թուրքեան նկատմամբ այդ անձին ունեցած ծայրայեղ հայեացքներու ու ըմբռնումի մասին շատ անգամ ականջիս հասած էին լաւ տպաւորութիւն չի ներգործող տարածայնութիւններ ու ես միշտ վերապահուածով ընդունած էի զանոնք. բայց հիմայ զժողովարար կը հաստատուին:

Ոնգրին վարժարաններու նիւթական կացութեան վրայ ըլլալով, Տիար ատենակալի յայտարարութիւնները կարճ կերպով սա իմաստով եղած են. «Վեր կրթական գործին մէջ բարենորոգում եր պէտք է մտնուի, մեր վարժարաններու վիճակը յարմարեցնելով իրենց նիւթական միջոցներուն, առանց այլևս ժողովուրդին վրայ բռն ըլլալու, քանի որ կտակարարական վարժարանները ամենուս համար բաց են և հայերէն լեզուն ինչ օգուտ ունի մեր տղան, քանի որ անով չէ որ պիտի ապրուի»:

Եթէ այս բառերը, որոնք վտանգաւոր սկզբունքի մը արտայայտութիւնն են, իւրեք պարզ, հասարակ անձի մը չըթնեմէն, մենք չպիտի յուզուէինք ու անոնք մեզի համար պիտի ըլլային սինլքոր արձագանքները այն տեսակետին համոզումներու, որոնք զարուս վարդապետութիւններու անժամանակ իւրացումի հետեւանքն են, բայց երբ անոնք կարտասանուին հանրային գործիչի մը կողմանէ, որ մանաւանդ կոչում ունի պղծին զաւակներու դաստիարակութեան վրայ հակելու, մենք, այսօրուան Հայերս, որ ինքնաճանաչութեան ամենախիստ գիտակցութեան մէջ կը փնտնենք մեր դիրքին ամրակողը, այո, մենք կըսեմ, լըսելով այդ ծանրակրօն բառերը կը վերաւորուինք ու կը խոչանդուինք մեր ամենէն սրբազան տրամադրու-

թիւններուն մէջ, ու մեր զգացումները յայտնի սրբապղծութի մը կենթարկուին:

Կարծաղութիւնը սրտածուրկ է: Մեր վարժարաններու մէջ բարենորոգումներ մտցնել և զանոնք, այսինքն Պուլկարիոյ բոլոր հայ վարժարանները լաւագոյն և հասարակութեան պէտքերուն հետ համեմատելու պէտք է, որ եթէ զժողովարար մինչև այսօր չէ ունեցած իրեն համակիր միտքեր ու գուրկ է մնացած անյողողող կամքերու նախաձեռնութեան, վտահարար կրնանք սակայն յոսալ որ մօտ ժամանակի մէջ պիտի ստանայ արժանաւայել կարգադրութիւն մը այն ուրիշ շատ մը խնդիրներու հետ, որոնք մեր վիճակի ապագայ Առաջնորդութեան հեղինակութիւնը պիտի ըլլան:

Թէ ինչ պիտի ըլլան այդ բարենորոգումները, ուղղութիւնը մեր առջև գծուած է այլևս: Իբր Պուլկարիացի եթէ երկիրն անդակաւ հանգամանքներէ մղուելու պարտական ենք, բնաւ չի պիտի մտնանք սակայն թէ մենք հայ ենք, ու իբր նայ ունինք տարբեր հայեացքներ, հոգեկան տարբեր թրթուրներ ու որոշ անձնայատկութիւն, որ ապագային խորհուրդ միշտ վառ պիտի պահէ մեր սրտերուն մէջ, Եւ այս նկատողութիւններու ներքեւ է որ մեր վարժարանները իրենց ամենախնարհ դիրքին մէջ իսկ կրկնակի կոչումներ ունին, այսինքն պատրաստել հայ տղան իբր երկրին մարդը և իբր Հայ, Հետեւարար այս հանգամանքները ուղղութեան շտուներ ու անոնցմէ անկախ ոգիով գործել: Երկու բան կը նշանակէ, կամ մենք չենք ըմբռնել մեր դիրքին իսկութիւնը ու այն անհամար վտանգները, որոնք մեզի ազգերու ճակատարժեքներն են և կամ չուզելով իբր ուրոյն ժողովուրդ ապրիլ, կը նախընտրենք իսկի դարերու շարունակութիւնը ու հրաժարել ապագայի մասին ամեն տեսակ թիկնածութիւններէ, որոնք եթէ այնքան շուտ ու հեշտիւ չեն ներկայանար իսկ սրտապնդող միթիթարութիւններ են սակայն մեզի պէս ջիր ու ցան ազգի մը համար իր գոյութեան ամենէն յոյս և ամենէն վատթար ժամերուն մէջ:

Ուրեմն ինչպէ՞ս բացատրել, ինչ-

պէ՞ս արդարացնել ազգային հոգաբարձուի մը սա սկզբունքը, որով կուզէ հայ տղան դաստիարակել, պէտք չի տեսնելով սորվեցնել անոր իր մայրենի լեզուն:

Բարենորոգում անուան տակ այսպիսի անհեթեթ գաղափար մը չերշնջել ուղեւը, պատմութեան ընթացքէն շեղիլ է ու ներկայի զէպերուն բողոքովին հակասական դիրք բռնել, մանաւանդ այն պահուն, երբ այդ ազգը ամեն ժամանակէ աւելի դառն փորձանքներու մէջ ինկած, ճգնաժամային պայքարներ կը մղէ իր հայ անուան, իր հայ լեզուին և իր հայ եկեղեցիին դէմ լարուած դաւաճաններու դէմ մաքառելու համար: Այդ պայքարները, որոնք իրենց ամենէն արիւնոտ շտ պայմաններու մէջ իսկ մեր ամենուս հաւասարապէս պաշտելի են, գուցէ վաղը չդադրին և պէտք ըլլայ շարունակել, բայց կըրոնք ո՞վ պիտի ստանձնէ, ո՞վ պիտի վարէ, եթէ այսօրուան սերունդը, որ վաղուան շինարար ըլլալու կոչուած է, մեծցած չըլլայ տոհմային ճգնաժամը: Երու նախանձախնդրութեան մէջ ու անոնց իստիգովը չվառուած:

Ո՛հ, խոստովանի՛ք որ ժամանակները մեզի համար մասնաւոր անհեթեթութիւններ ունին:

Եթէ այսօր հոգաբարձու մը իր վստահաւոր սկզբունքներու կիրառումին մէջ կըմբռնէ իր ազգին ծառայելու պարտականութիւնը և իր կոչումին օգտակարութիւնը, չը գիտեմ հապա անոնք, այն քառասուն երկու անձերը, որոնք իրենց մեղապարտ քուէնքով այդ կոչումը նուիրագործեցին, ի՞նչ տեսակ անոնորութիւն գգալու են իրենց խղճը: Երբ անոնք խորը գաւակները անարդարաճախ վստահի մը եւ դժխեմ ճակատագրի մը ենթարկուած տեսնելով:

Այո, այդ վտանգը դե՞ս անարդարանալի է:

Եթէ նիւթական տափնապնդում ու դրամական անձկութիւններու հետապակերն է որ անոր, ուղեղին մէջ դրաւ այդ գաղափարին սաղմը, ևս չեմ կրնար ուրանալ սակայն յիշել:

Իրօք այդ տափնապնդում անձկութիւնները գոյութիւն չունին:

Կայ արդեօք պայման մը, որտե՞ս ենթարկուած ըլլայ մեր կրթական գործը ու այդ պայմանը անոր ապագային մասին վստահութիւն և կա-

թանին քաջալերում սրով Հայաստանը մարտի հայ աարրից: Ու չողաց սուլթանական սուրը ամբողջ Հայաստանում: Սեւ ծովի փերից սկսած մինչև Եփրատ ու Տաւրոսեան լեռները, հայկական գլուխներ էին հնձվում եւ հայ արիւնից գետեր ու լճեր կազմվում: Կատարվում էր ամենամեծ ուժերը մարտիկային պատմութեան մէջ: Հայը կին, աղջիկ, ծեր երիտասարդ, ծնկերմանուկ մորթվում էին սան, եկեղեցու, բաղնիքի, գաշտի մէջ եւ ամէն տեղ ուր որ թուրքը նրան գտնէր: Սար, ձոր, գաշտ, քար, փուռ, թուփ, ծառ, ջուր ներկվում էին հայի արիւնով: Զորերից, անտառներից, լեռներից, գաշտներից, աւերակ գիւղերի եւ քաղաքների փլատակների տակից մորթվող, շարժարժող, բռնարարվող հայերի լացն ու կոծը, հատաչանքն ու անբոցն էին լսվում: Կտորվում էր հայը անզէն, առանց պաշտպանուելու-թող ձիւղը անգամ թափելու:

Բռնաւորի՛ իր զուլեւր կտորդ ձեռքը լիզելով, այո, մեծ էր, լիք էր գազան ոճրագործը, բայց ստոր կերպով էր մնում և գոհը:

Իր ցելի վրա ունեցած անէնաչափաւոր յոյսերն իսկ:

Ամբողջ Հայաստանը դարձաւ գերիզմանատուն՝ մեռելները թաղվում էին շտապով, եւ մի քանի հատը միասին: Մի քանի ամսվան մէջ հողի, շան, գէլի եւ գիշատիչ թռչունների բաժին դարձան մի քանի տասնեակ հազար հայեր, իսկ մի խոշոր մասն էլ փոթորից սարսափած ուխարների պէս սար ու ձոր ճեղքելով, ինկարտոյս փախան դէպի Կովկաս եւ այլ երկիրներ: Ահա ինչ էր ոճիրը, անուկ էր գոհերի թուլահոգութիւնը, անսելի եղաւ երկրից դուրս գտնվող հայերի շարումը:

Շարքեց եւ սակաւթիւ յեղափոխական տարրը. բարենորոգումներն էր գոնէ կրտսինք: ավար Հայաստանի փոխարէն նրա առջևն էր դրվում մի աւերակ, սպանդանոցի վերածված արիւնյալ երկիր, որի մէջ ապրող ժողովրդի ողջ մնացած մասն

էլ կատաղի անպարանջով դուրս էր փախուցում, կամ պատրաստվում էր մահմետական լինել իր գոյութիւնը փրկելու համար:

Հայ յեղափոխականները վստահեցնող վարաններ տուող մի բան էլ կար, Այդ իր խիղճն էր: Կտորածի շարժառիթները յեղափոխական քայլերն էին: Արդեօք ինքը իրաւունք ունէր ստրկացած ժողովրդին այնպիսի մի ճամբի մէջ զնելու, որով նա, ինքն պէս փառք ցոյց տւեց, անկարող էր գնալ առանց մեծ զոհողութիւնների: Ու միթէ այս գոհողութիւնները այնքան մեծ չէին, որ բողոքովին տապալէին հայ ժողովրդին, ու վերջնապէս զրկէին նրան իբր ինքնուրոյն ցեղ ապրելու ուժերից:

Սրանք հարցեր էին, տանջող շարժարող հարցեր, որոնք հակառակ կատարողից յետոյ, սուր գամբի նման ցցվում էին հայ յեղափոխական տարրի ուղեգրում եւ անյապաղ լուծում պահանջում:

(Շարունակելի)

